

ամի ի 1754 ի 6 Մարտի՛ յետ տասնամսոց վաղձանին Մինասայ:

ԳԼ. ԾԵ.

Մեքսասաներորդ Ժողով Աշջմիածին և ան ընտրելոյ զնոր Կաթողիկոս:

(Ամբ Տեառն 1763): — Իբրև վաղձաննեցաւ Յակոբ Աթուղիկոս Շամսիեցի յետ Հայրապետութեան իւրոյ զամս երեք և ամիսս ութ, եղև Ժողով հնգիցս վասն ընտրութեան նոր Կաթողիկոսի յաթոռն Աշջմիածին, բայց և ոչ ոք ընտրեցաւ, զի Ժողովն ընդհանուր գրեթէ զայլևայլ անձինս ի մէջ բերէին ընտրութեանն. վասն որոյ և ոչ ումէք յաջողէր վիճակն:

Այլ ի հինգերորդ գումարման Ժողովոյն Յարութիւն վարդապետ Բասենցի յառաջ արարեալ զՍիմէոն Արդապետ Արևանցի, յառնէ ի տեղւոջէ և համբուրէ զաջ նորա, ասելով կեցցէ հոգևոր փեր Տե՛հոն Կաթողիկոս. ընդ որ ամենեքին հաւանեալ՝ ընտրեցին զնա և օծին Կաթողիկոս առանց հաւանութեան երևելեացն Պօլսոյ, որոց կամօք և դիտութեամբ լինէր ընտրութիւն Կաթողիկոսաց:

Ապա Սիմէոն Կաթողիկոս յետ օծման իւրոյ գրեալ առ Յակոբ Պատրիարդ և առ մեծամեծս Պօլսոյ՝ յայտնեաց նոցա զընտրութիւն իւր և զօծումն, ընդ որ հաճեցան նոքա ևս:

(Մնացելն է յետագայն):

ԱՐԷԼ ԱՐԲԵՊԵՍՅՈՊՈՍ.

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՆՅԵԱԼՆ.

(Շարունակութիւն):

Ս. Սահակ և Մեսրոպ երանելեաց ազնիւ բաղձանաց և բազմարդիւն վաստակոց ազդի ազդի արգասիքներ հետզհետեաւ արդիւնաւորուեցան և յարասեցին Հայաստանեայց Ակեղեցւոյ մէջ՝ ջանիք և անխոնջ հետապնդութեամբ իւրեանց աշակերտաց և յաջորդաց՝ առաւելապէս իմն ծաղկեցուցանելով և պայծառացուցանելով զԱկեղեցին, այնպէս որ՝ ըստ պահանջմանց ժամանակին՝ տլ ևս եկեղեցական ինչ ինչ բարեկարգութիւնքը՝ երգեցողութիւնքը, արարողութիւնքը և կանոնական պատուիրանքը յաւելացուցին և գեղեցկաձոխ սահմանեցին, յաճախեցին Հայկական գրականութեան հարստութիւն և շքեղութիւն պարգևելոյ, և իւրեանց երանելի Արդապետաց և վարժապետաց ձգուելքը քան զնոսա բեղմնաւորեցին յօգուտ և ի յառաջադիմութիւն ժողովրդեան թէ ըստ կրօնականին, թէ ըստ բարոյականին և թէ ըստ մտաւորականին:

Արքան միջոցներն և ժամանակն կրնբրէին նոցա, ոչինչ աշխատութիւն չէին խնայած Ակեղեցւոյ պայծառութեան և Ազգի յառաջադէմ և բարեկեցիկ յարասեութեան և զոյութեան համար:

Ինչպէս Սահակ և Մեսրոպ երանելեաց, նոյնպէս սոցա աշակերտաց և եկեղեցւոյ վարդապետաց ջանքերն յաւելակերտնայած էին գլխաւորապէս Ակեղեցւոյ պայծառութեան և ժողովրդեան հարգաս օգաին և բարեկեցութեան, ազ-

գային - կրօնական դաստիարակութեան և մտաւորական զարգացման միջոցաց վերայ, այնքան որ՝ Ակեղեցւոյ և Դոգովոց կանոնք ըստ մեծի մասին սոյնպիսի նպատակաց ուղղութիւնք ունէին և կհետեւէին միշտ՝ ինչպէս Ազգային և Ակեղեցական պատմութիւնք կենդանի վկաներ կը հանդիսանան, և բաւական հողեւորական և աշխարհական անձինք երիտասարդական հասակին մէջ աշխոյժ և հոգեվառ եռանդով աշխարհէ աշխարհ շարունակ կը թափառէին մանաւանդ ի Յունաստան, և ուր որ ի ժամանակին ուսումն, դիտութիւնք և ըն. ծարկեալ էին, անդ կաշակերտէին և բարի օրինակներ և հրահանգներ և կարգադրութիւնք ևս քաղելով և ուսանելով՝ կրեւելին կտարածէին ի Հայս, և այս առիթով աւելի համակրութիւն և սէր նուիրած էին Յունաց:

Սակայն աստի զոգցես աշխարհավարութեան ուշադրութիւնը զրգոնցաւ և Պարսից նախնանք տակաւ առ տակաւ բորբոքուելով և յուզուելով՝ ատելութիւնը սաստկացաւ՝ կարծել տալով որ Վրբիտանէական կրօնակցութիւնն թիլադիր կհանդիսանայ այս համակրութեան, և դաւադիր դաշնակցութիւն կկազմուի ընդ դէմ իւրեանց (Պարսից). ուստի նախ Հայոց քաղաքական իշխանութեան տապալուելը փութացնելոյ աշխատելով՝ երեւակայեցին, որ յետոյ ևս կյաջողին Հայոց Վրբիտանէական կրօնը մոզութեան պաշտաման զոհել տալ և Հայութիւնը ի մի ձուլել ընդ պարսկութեան:

Այսպէս ուրեմն պարզ կրօնասիրական եռանդուն ջանից և ուսումնասիրական աշխատութեանց համար անակնկալ այս-

պիսի մի ծանր հետեանք յառաջանալէն՝ Պարսից նման կասկածոտ և խորամանկ մի դրացի հզօր ազգի մեքենայութեանց տեղի տուին և ոչ սակաւ տազնապներ տեղացին Հայաստանեայց Ակեղեցւոյ գլխոյն վերայ, այնպէս որ՝ Պարսից վերջին մի ահեղ փորձին ենթարկուելով՝ 450—54 թուականաց դառնավիշտ միանգամայն պանծալի և փառաւոր անցքերը կրեց Ակեղեցին:

Հինգերորդ դարու ժամանակին ուսումնասէր երիտասարդութեան վառվռուուն միանգամայն անխոհեմ շարժումնք աւելի զրզիռ և տեղիք տուած էին այսպիսի ծանրադէտ հարուածոց, որք մինչև անգամ ներքին երկպառակութեան դուռ բացած էին, ոմանք Յունաց՝ և այլք Պարսից համակրութիւն\*) ցուցանելով:

Բայց կարժէի՞ն: Աւ ի՞նչ հարկ կար: Պոնէ ժամանակին նենգամիտ Յոյներ անկեղծ վարուէին Հայոց հետ և անկեղծ համակրութիւն և սէր փոխանակէին, Պարսիկներն այնքան չէին համարձակեր Հայաստանեայց Ակեղեցին վտանգելոյ հա-

(\*) Ներկայ ժամանակիս մէջ Հայ երիտասարդաց ոմանց ի Վաղղիտ, սակաւուց Անդղիտ, այլոց ի Վերմանիա և ըն. դիտութեանց պարապելով և ուսումն ստանալով՝ ևս և իրերահակառակ գաղափար և համակրութիւն ցուցանելով գործած յուզմունքները եթէ կշռեմք և բաղդատեմք, զիւրին կհասկացուի Հինգերորդ դարու ուսումնասէր երիտասարդութեան ընթացքը թողումք զի այժմեանք սակաւաթիւ և ոչ — եկեղեցական կուսակցութիւնէ են, և Վերմանիոյ և Վաղղիոյ և ըն. երկիրներու մէջ բնակիչ Հայք գրեթէ չկան, կամ թէ խիտ աննշան են:

մար մեքենայութիւններ լարելոյ: Սակայն քանի մեծ զժբարդոտ թիւն էր Հայոց նըկատմամբ՝ զի մի կողմանէ՝ Յունաց մէջ կրօնական հերձուածներ յաճախելով և ստուարանալով՝ և միւս կողմանէ՝ կրօնամուրթիւնն ևս դաւադիր աջակցելով՝ Հայոց դէմ՝ փոխանակ օգնութեան և կարեկցութեան՝ դժոխային սպառնալիքներ կորոտային, միանգամայն չտեսան իւրեանց զլեոց վերայ աճապարած արկածները ևս, որով պարսկական աշխարհափարութիւնն որոգայթից մէջ գլտորեց (յոյները) և զբաղեցուց՝ անուշակցով որ՝ Հայք ևս տկարացած և անօգնական մընացած լինելով՝ նախ Հայերը ի մի կըձուէ, և ապա Յոյները:

Ե. յսպիսի մեքենայութեամբք և աշխարհափարութեամբք Հայոց մէջ երկպառակութեան որոմները ցանուած էին, և հեաղհետէ երկու հզոր կուսակցութիւն (պարսկական և յունական կողմնակցութիւնք) գոյացան և իւրաքանչիւրն իւր նպատակին հասանելոյ համար՝ կամ թէ Եզգի և Ակեղեցւոյ փրկութիւնը այս կամ այն կողմ՝ երեւակայելով, սկսան զիրար ատելոյ և ներքին պատերազմներու սարսափելի և եղբայրասպան տեսարանները ներկայացնելոյ:

Գրեթէ ինքերորդ դարու կիսէն սկըսաւ այս ներքին պատերազմը ահեղ իմն կերպիւ, և երկու կուսակցութիւնք ևս այս միջոցիս յանդուգն զինուելով ընդ դէմ միմեանց՝ միայն անձնական իրերակործան կիրքիւր ամեն տեղ կտիրէին, և մինչև կրօնը վտանգի հանգիպեցաւ. ըստ որում Յոյներն օգնելոյ անկարող գտնուելով՝ միանգամայն դաւադիր, Պարսիկք հազիւ

բարեպատեհ ժամ գտած կարծեցին և յարձակման նախադիժը արդիւնաւորել չդանդաղեցան՝ ալզի ազգի նեղութիւններ և հարստահարութիւններ սրտածաւելով, և խորամանկութեամբք լարուած որսգայթները ի գործ դնելով՝ Հայոց քրբիտանէական կրօնը, եկեղեցին, միանգամայն Հայութիւնը ջնջելոյ համար:

Սակայն՝ դարձեալ ինքերորդ ամենանշանաւոր դարուն մէջ՝ երանելի Ալեոնդեանց և քաջ Արգանանց զօտեպինա շահատակութիւնք և անձնազոհ նահատակութիւնք խիղախելով ամեն վտանգներու և որոգայթից դէմ՝ զրեւթէ վերջ տուին օտարաց ամեն մեքենայութեանց, և եկեղեցին և ազգը կրկին ազատեցին տաքնապալեց և ամենազառն մի որոգայթէ, և առաւել փառաւոր ծածանեցաւ Հայութեան դրօշակը:

Ե. հաւաստի ըստ այսմ Ս. Սահակայ և Մեծորդբայ բազմադիւն ծրանց արգասիքներ մօտ ժամանակի մէջ այսպիսի նըշանաւոր մի փայլ ևս ստացան և հասկացուցին իւրեանց ջանից արժէքը Հայաստանեայց եկեղեցւոյ՝ ազգի և լեզուի ապահովութեան և հաստարմատ գոյութեան համար. որում այնպիսի ժամանակի և ազգի այն տկար վեճակին մէջ՝ մի հզոր և դբացի ազգի և տերութեան մեքենայութիւնք և յարուցած ճակատամարտն անդամ չեղեցին աւելի հարուածներ տալոյ:

Ե. յո՞ միայն ներգործեցին Ալեցերորդ դարուն մէջ Հայկական դպրութեանց մի այլ տեսակ յեղափոխութիւն տալոյ, և ուսումնասիրութեանց համար երթեւեկութիւնքը ընդհատուեցան՝ Հոյոց մէջ

Յունաց զէմ մեծ ասելու թիւն և հակակրութիւն տարածուելով, և ուսմանց ասպարէզը անձուկ շրջանի մէջ մնաց. բայց ոչ երբէք ազգային և կրօնական հարադատ դաստիարակութեան և եկեղեցւոյ պայծառութեան համար թուրութիւն պատճառեցին, չնայելով՝ որ թէպէտ երբեմն թշնամիք կրնկձէին և ամօթապարտ կղաղարէին չարամիա մեքենայութիւններէ, սակայն երբեմն միմեանց կ'յաջորդէին ուրիշ թշնամի ազգեր ևս տիրապետութեան և երկրակալութեան հետեւելով, նոքա ևս կ'յաճախէին կրօնից և ազգութեան զէմ մարանչելոյ, թէ և միշտ անյաջող կիշնէին:

Ինչպէս Հինգերորդ, նոյնպէս Աւեցերորդ և Աթոմերորդ դարուց մէջ այսպիսի տեսարաններու նկարագրութիւնք լիովին կաւանդուին մեր ազգ. և եկեղ. պատմութեանց մէջ, յորս կերեւին դարձեալ եկեղեցւոյ և եկեղեցական պաշտօնէից վիճակ և ջանքեր, որք ոչ մի արկածից առջև վհատիլ չունեցան, և ընդհակառակն անխոնջ և առաւել ոգևորուած կգործէին, և միշտ ազդի և եկեղեցւոյ օգուտը կ'սորհէին և կ'պաշտպանէին:

Բազրատունեաց իշխանութեան պայծառ ժամանակին մէջ անգամ այնքան արգիւնաւոր չեղաւ եկեղեցւոյ վիճակը՝ որքան հայաժամանաց միջոցին. և եկեղեցական նուիրապետութիւն միշտ և ամեն ժամանակ իւր պարտքը քաջ կ'ձանաչէր և ի գործ կ'դնէր ամեն տեսակ նեղութիւններ և հարստահարութիւններ կրելով հանգերձ:

Որոք մի նշանաւոր տպացոյց լինելոյ համար թող ընթերցողն ուշադրութեան

և բաղդատութեան տոնու Աթոմերորդ դարու մէջ Հայոց եկեղեցւոյ վիճակը, և թէ եկեղեցական նուիրապետութիւն և ժողովուրդ ինչպէս սիրով միացած էին և կ'մտիթարէին զմիմեանս, — ինչպէս նա և յիշեալ դարուն մէջ (ի 645 թուին) Շ Նուր կոչեցեալ Ներսէս Աթոմեղիկոս Արևիկեցւոյ և Ազգի օգտին համար հոգացած միջոցին՝ Ղուենայ Հինգերորդ Ժողովոյն մէջ երրորդ յօդուածով յիշեցոյց ազգային դաստիարակութեան նշանակութիւնը և անհրաժեշտութիւնը՝ ևս և պարտաւորութեանց մէջ սահմանադրեց, որ « Ապիսկոպոսն այցիլութիւն արասցէ ի վիճակի իւրում ի վանորայս, է դպրոցս, և ի հիւանդանոցս », և ինչպէս որ ի նախնեաց հետէ ևս կարգաւորուած էր, որ և յաւէտ ամեն Ապիսկոպոսաց միանգամայն եկեղեցւոյ ամեն պաշտօնէից մեծ պարտաւորութիւններէն զխաւորագոյնն էր և է ամեն ժամանակ և ամենայն տեղ:

(Շարունակելէ)

ՊԱՆՏՈՒՄ ՎԱՐՄԱՅԵՏ ՄԱՆՈՒՆԻ:

**ՊԱՏՄԱԿԱՆ**

**ՅԻՉԱՏԱԿԱՐԱՆ**

Ի ՎԵՐԱՅ ՏԵՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԿՐՕՆԻ

ՆԱԽԻՆ ՀԱՅՈՑ

(Շարունակելէ):

ԺԳ. — Բաց ի երկրի խնամակալ չաստուածներից ժողովուրդը ունէր նա և իւր մասնաւոր չաստուածութիւնքը, որ էին մի